

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Պարտիզա անը եւ հունտը



Written by: Edward Hughes
Illustrated by: M. Maillot; Lazarus
Adapted by: E. Frischbutter; Sarah S.
Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife
gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.
Alastair Paterson
Produced by: Bible for Children
www.M1914.org

BFC
PO Box 3
Winnipeg, MB R3C 2G1
Canada


©2020 Bible for Children, Inc.
License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.

Օրին մէկը Յիսուս
լինին ափին նստած կը
սորվեցներ: Շատ մարդիկ
հաւաքուած իրեն մտիկ

Կ'ընէին: Ժողովուրդին
թիւը բազմացաւ:
Յիսուս արդեօք
ի՞նչ կ'ըներ:



Մօտերը նաև մը տեսնելով, Յիսուս
նաև բարձրացաւ: Հիմա Ան կը
տեսնէ ժողովուրդը եւ անոնք
ալ իրեն կը տեսնեն եւ Չիւք
կ'իմանան:



3

Յիսուս սկսաւ պատմել
պատմութիւններ սովորական
բաներու մասին, որոնք
ժողովուրդին կը սորվեցնեն
Աստուծոյ մասին:



4

"Պարտիզպան մը հունտեր կը
սրսկեր իր դաշտին մէջ": Յիսուսին
պատմութիւնը նկարի պէս էր
բառերով եւ ոչ թէ գծագրութեամբ:



5

Ժողովուրդը կրնար նկարել
իր մտքին մէջ, որովհետեւ
շատ անգամներ կը
տեսնէին:



6

Սրսկուած հունտերէն
ուռի ճամբու վրայ
կ'իյնային: Աւա՛ղ, թռչունները
արագօրէն վար կու գային
եւ կ'ուտէին հունտերը:



7

Կարգ մը հունտեր ժայռերուն վրայ
կ'իյնային: Անոնք արագօրէն մեծցան
եւ կարճ բոյսերու վերածուեցան: Տաք
արեւը յանկարծ կը չորցնէ
գանոնք, որովհետեւ
անոնք չեն կրնար
իրենց արմատները
խոր թափանցել
հողին մէջ:



8

Ուրիշ հուևտեր արմատ կը գտնէին փուշերուն մէջ: Ան ծիլ չի տար հոն: Փուշերը կը պաշարեն երիտասարդ բոյսը անոր վրայ գոցելով եւ արգիլելով արել եւ անձրել:

9

Մտացալ հուևտերը լաւ գետնի վրայ ինկան: Ժամանակ անցնելէ ետք, անոնք մեծցան առողջ բոյսերու ահագին Նոր հուևտեր շալկելով: Պարտիզպանը շատ ուրախ պետք էր որ ըլլար:

10

Պատմութեան աւարտին, աշակերտները հարց տուին Յիսուսին. "Ինչո՞ւ կը սորվեցնես":

11

Յիսուս ըսաւ. Առակները կ'օգնեն ժողովուրդը, որպէսզի հասկնան Աստուծոյ մասին, եթէ անոնք Չայն իրաւ կը սիրեն:

12

Ժողովուրդը, որ չի սիրեր Աստուծոյ, չի կրնար հասկնալ առակները:


13

Յիսուս բացատրեց: Ան ըսաւ, որ այդ հուևտը Աստուծոյ խօսքն է: Հունտը, որ ոտքի ճամբուն վրայ է, կը նմանի մէկու մը, որ կը լսէ, բայց չի հասկնար Աստուծոյ խօսքը:

Սատանան կը ձգէ, որ մոռնան, ինչ որ Աստուած տուաւ:

14

Շատեր շուտով կ'ըմբռնեն Աստուծոյ խօսքը: Անոնք կը նմանին այն հուստին, որ ժայռոտ հողի վրայ է: Բայց անմիջապէս, որ մէկը ծիծաղի իրենց վրայ կամ դժուարութեան հանդիպին, որովհետեւ Աստուծոյ կը սիրեն, ցաւալի բան մը կը




պատահի:



15

Այս նոյն մարդիկը, որոնք հաճոյքով սկսան հետեւիլ Յիսուսին, յանկարծ զայն կը թողուն եւ Աստուծոյ խօսքին չեն հնազանդիր: Չեն ուզեր գիտնել Աստուծոյ հնազանդելու: Ինչ թշուառ են, որոնք կ'ուզեն իրենց բարեկամը գոհացնել քան Աստուած:



16

Փուշերը առակին մէջ աշխարհի հոգերուն նման են եւ դրամի սերը, կարգ մը մարդոց կեանքը կը լեցնէ: Անոնք այնքան զբաղուած են դրամ թիգելու, որ ժամանակ չունին Աստուծոյ եւ զայն դուրս դրած են իրենց կեանքէն:



17

Սակայն հուստը, որ լաւ հողին մէջ կ'իյնայ եւ լաւ հունձք կու տայ կը նմանի Աստուծոյ խօսքին, որ կը թափանցէ սիրտերը եւ կը փոխէ մարդոց կեանքը: Այս մարդիկը կը ծառայեն եւ կը յարգեն Աստուծոյ:



18

Բազմութիւնը չէր ուզեր ձգել: Շատեր կ'ուզէին հետեւիլ Աստուծոյ եւ Անոր գոհացնել Յիսուսի առակները, անոնց օգնեցին, որպէսզի հասկնան ինչպէս հնազանդին Աստուծոյ:




19

Պարտիզպանը եւ հուստը
 Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
 Սուրբ Գիրքը:
 Կը գտնուի հետեւեալին մէջ
 Մատթէոս 13

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
 Սաղմոս 119:130

20



Այս Սուրբ Գիրքի պատմությունը մեզի կը պատմե մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գեշ բաներ ըրած ենք, որոնք հնք մեզ կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի էաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր: Յովհաննու 3:16